«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Տարրական կրթության հանրակրթական ծրագրի բովանդակությանը ներկայացնող նվազագույն պահանջները
ԱՌԱՐԿԱ	դասվար
ՀԵՂԻՆԱԿ	Սեդա Սարգսյան
ՄԱՐԶ	Շիրակ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Սարատակի միջնակարգ դպրոց

1. ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ (ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ) ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

8. Տարրական կրթության հիմնական նպատակներն են սովորողի՝

1) մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների զարգացումը.

2) լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության աշխարհայացքային պատկերացումների հիմքերի ստեղծումը.

3) աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումը.

4) բարեկիրթ վարքի և կայուն արժեհամակարգի հիմքերի ձևավորումը.

5) բարոյահոգեբանական, հայրենասիրական, գեղագիտական, էկոլոգիական և ֆիզիկական դաստիարակությունը և առողջ ապրելակերպի հիմքերի արմատավորումը.

6) միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող կրթամակարդակի ապահովումը:

1. ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

9. Տարրական կրթության ծրագրի «Հայոց լեզու» ուսումնական բնագավառը նպատակաուղղված է՝

1) սովորողի կողմից մայրենի լեզվի տիրապետման անհրաժեշտության ու առաջնայնության, ազգային ինքնության հաստատման ու պահպանման գործում մայրենի լեզվի դերի գիտակցմանը.

2) գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու գործում հայերենի դերի արժևորմանը.

3) մայրենի լեզվով՝ բանավոր և գրավոր խոսքի միջոցով սեփական մտքերը, հույզերն արտահայտելու, մարդկանց հետ հաղորդակցվելու, շրջապատող աշխարհը և մարդկանց հասկանալու, բնության, հասարակության և մարդու մասին գիտելիքներ ստանալու, հայերենով ստեղծված գրական-գեղարվեստական ստեղծագործություններին հաղորդակից դառնալու, սեփական ստեղծագործական ունակությունները դրսևորելու և զարգացնելու նախնական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

10. Տարրական կրթության ծրագիրը պետք է ներառի նախնական, տարրական գիտելիքներ, պատկերացումներ՝

1) ուղղագրական կանոնների,

2) քերականական կանոնների,

3) մանկական գեղարվեստական գրականության որոշ նմուշների և բանահյուսական նյութերի որոշ մշակումների մասին:

2. ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ

11. Տարրական կրթության ծրագրի «Օտար լեզուներ» ուսումնական բնագավառը նպատակաուղղված է՝

1) սովորողի հաղորդակցվելու և համագործակցելու, ոչ հայախոս անձանց հետ շփվելու, լեզվակիր երկրի մշակույթին հաղորդակցվելու հիմքերի ձևավորմանը.

2) սովորողի կողմից օտար լեզվի՝ որպես տեղեկություն ստանալու և փոխանցելու դերի ու նշանակության, լեզվակիր ժողովրդի հոգևոր-մշակութային արժեքների վերաբերյալ նախնական պատկերացում ունենալու գործում օտար լեզվի իմացության դերի գիտակցմանը:

12. Տարրական կրթության ծրագիրը պետք է ներառի նախնական, տարրական գիտելիքներ, պատկերացումներ՝

1) հաղորդակցման և առօրյա իրադրությունները նկարագրելու համար անհրաժեշտ բառապաշար՝ ուսուցանվող օտար լեզվից,

2) օտար լեզվի հնչյունների ու այբուբենի, արտասանության և ուղղագրության տարրական կանոնների,

3) պարզագույն բառակապակցություններ և նախադասություններ կազմելու կանոնների,

4) լեզվակիր ժողովրդի բանահյուսության և երաժշտության որոշ նմուշների մասին:

3. ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

13. Տարրական կրթության ծրագրի «Մաթեմատիկա» ուսումնական բնագավառը նպատակաուղղված է՝

1) սովորողի կողմից սեփական մտքերը ճշգրիտ ձևակերպելու, ուրիշի մտքերը հասկանալու անհրաժեշտության ու կարևորության, ինքնուրույնաշխատելու և ստեղծագործելու անհրաժեշտության գիտակցմանը.

2) պարզ մաթեմատիկական հասկացություններով աշխատելու, խնդիրներ և վարժություններ լուծելու միջոցով սովորողի մտավոր ունակությունների զարգացման խթանմանը.

3) մտքերը հստակ ձևակերպելու, տրամաբանված դատողություններ կատարելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու կարողությունների ձևավորմանը:

14. Տարրական կրթության ծրագիրը պետք է ներառի նախնական, տարրական գիտելիքներ, պատկերացումներ՝

1) բնական թվերի և դրանց համեմատման,

2) թվաբանական չորս գործողությունների և դրանց կատարման հիմնական կանոնների,

3) ամբողջի և նրա մասերի,

4) երկրաչափական պարզագույն պատկերների և մարմինների, պարզ չափումների,

5) երկարության, մակերեսի, ծավալի, ժամանակի, արագության, զանգվածի, դրանց չափման միավորների և չափման պարզագույն գործիքների,

6) տրամաբանական մտածողության մասին:

4. ՏՀՏ, ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

15. Տարրական կրթության ծրագրի «ՏՀՏ, համակարգչային գիտություններ» ուսումնական բնագավառը նպատակաուղղված է՝

1) ալգորիթմական մտածելակերպի, տեղեկատվություն ձեռք բերելու, ստեղծագործելու, հաղորդակցվելու, համագործակցելու, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներին տիրապետելու և կենցաղում կիրառվող թվային սարքավորումների հետ աշխատելու նախնական կարողությունների և հմտությունների ձևավորմանը.

2) սովորողների կողմից տեղեկույթի հետ աշխատելու հմտությունների զարգացման անհրաժեշտության.

3) ժամանակակից կյանքում համակարգչի դերի ու նշանակության, մեր կյանքում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների դերի գիտակցմանը.

4) «անվտանգ» տեղեկատվություն ստանալու և տարածելու հետ կապված իր իրա-

վունքների ու պատասխանատվության կարևորմանը.
5) համակարգչի ընձեռած հնարավորությունների ուսումնասիրմանը և կիրառմանը:
16. Տարրական կրթության ծրագիրը պետք է ներառի նախնական, տարրական գիտելիքներ, պատկերացումներ՝
1) տեղեկույթի, նրա ստացման, մշակման, փոխանցման, պահպանման, մշակման ու օգտագործման,
2) իր առօրյա գործողությունները պլանավորելու,
3) խնդիրներ լուծելիս՝ ալգորիթմական մոտեցում ցուցաբերելու,
4) համակարգիչը ճիշտ միացնելու, անջատելու և վերաբեռնավորելու,
5) համակարգչից օգտվելու հիգիենիկ նորմերը պահպանելու,
6) տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների,
7) համացանցի էթիկայի կանոնները պահպանելու մասին:

5. ԲՆՈՒԹՅՈՒՆ, ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

17. Տարրական կրթության ծրագրի «Բնություն, բնական գիտություններ» ուսումնական բնագավառը նպատակաուղղված է իր շրջապատի բնության տարրերի և երևույթների վերաբերյալ պարզագույն պատկերացումներ ունեցող, դրանք գործնականում կիրառող, բնության մեջ և կենցաղում պատասխանատու վարքագիծ դրսևորող անձի ձևավորմանը:
18. Տարրական կրթության ծրագիրը պետք է ներառի նախնական, տարրական գիտելիքներ, պատկերացումներ՝
1) մարմինների շարժման, ջերմության, լույսի, ձայնի,
2) պարզագույն չափիչ սարքերի,
3) արեգակի, լուսնի, երկիր մոլորակի,
4) բույսերի և կենդանիների, մարդու մարմնի մասերի, զգայարանների,
5) շրջապատում հանդիպող թունավոր նյութերի հետ վարվելու տարրական կանոնների,
6) հիգիենայի տարրական կանոնների մասին:

6. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

19. Տարրական կրթության ծրագրի «Հասարակություն, հասարակական գիտություններ» ուսումնական բնագավառը նպատակաուղղված է՝
1) մարդու և հասարակության վերաբերյալ պատկերացումներ ունեցող, ճանաչողական, սոցիալական և անհատական կարողությունների ու հմտությունների տիրապետող, ազգային ու համամարդկային արժեքներ կրող սոցիալապես ակտիվ անձի և քաղաքացու ձևավորման հիմքերի ապահովմանը.
2) սովորողի կողմից հայրենիքի, պետության և ազգի դերի ու նշանակության գիտակցմանը.
3) հասարակական համակեցության կանոնների կարևորմանը.
4) իր և ուրիշների աշխատանքի, հաջողությունների, ինչպես նաև կրթության դերի գնահատմանը:
20. Տարրական կրթության ծրագիրը պետք է ներառի նախնական, տարրական գիտելիքներ, պատկերացումներ՝
1) Հայաստանի Հանրապետության պետական դրոշի, զինանշանի և օրհներգի,
2) հայ ժողովրդի անցյալի ու ներկայի կարևորագույն իրադարձությունների,

նշանավոր գործիչների, մշակութային արժեքների և ազգային, պետական տոների,
3) հայրենիքի, ընտանիքի, ազգի և հասարակության,
4) մարդկանց լեզվական, ազգային, ռասայական, կրոնական բազմազանության,
5) Հայաստանի վարչատարածքային բաժանման,
6) իր բնակավայրի բնության, պատմության և մշակութային հուշարձանների,
7) հասարակական վարքի կանոնների, իր իրավունքների ու պարտականությունների,
8) մարդկանց միջև հավասարություն, արդարություն, բարեկամություն և խաղաղություն հաստատելու անհրաժեշտության մասին:

7. ԱՐՎԵՍՏ

21. Տարրական կրթության ծրագրի «Արվեստ» ուսումնական բնագավառը նպատակաուղղված է՝
1) գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության ապահովմանը.
2) սովորողի կողմից արվեստի ստեղծագործությունների, բնության և շրջապատող աշխարհի գեղեցկության և ներդաշնակության հանդեպ զգայուն վերաբերմունքի.
3) հասարակական վայրերում և մշակութային միջոցառումների ժամանակ պատշաճ վարքագծի դրսևորմանը.
4) ստեղծագործական երևակայության և պատկերավոր մտածողության զարգացմանը:

22. Տարրական կրթության ծրագիրը պետք է ներառի նախնական, տարրական գիտելիքներ, պատկերացումներ՝
1) կերպարվեստի՝ գեղանկարչության, գծանկարչության, քանդակագործության, դեկորատիվ-կիրառական արվեստի և երաժշտության,
2) արվեստի տեսակների,
3) արվեստի տարբեր ժանրերում ստեղծագործող որոշ արվեստագետների, նրանց գործերի,
4) արվեստի ստեղծագործությունների ձևի և արտահայտչամիջոցների,
5) ժողովրդական և դեկորատիվ-կիրառական արվեստի, դրա ձևերի, մարդու կյանքում դրանց դերի,
6) հայրենական և այլազգի արվեստագետների նշանավոր ստեղծագործությունների մասին:

8. ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

23. Տարրական կրթության ծրագրի «Տեխնոլոգիա» ուսումնական բնագավառը նպատակաուղղված է՝
1) սովորողների աշխատանքային նախնական հմտությունների, աշխատանքի և աշխատող մարդու նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորմանը.
2) աշխատանքային նյութերի, գործիքների, ռեսուրսների, անձնական և հանրային ունեցվածքի նկատմամբ խնայողաբար վերաբերմունքի դաստիարակմանը.
3) կենցաղում աշխատելու տարրական գիտելիքների և կարողությունների ձեռքբերմանը.
4) միջավայրը գեղեցիկ և հարմարավետ դարձնող օգտակար իրերի ստեղծման, գեղագիտական արժեքի ընկալման և գնահատման կարողությունների զարգացմանը.

5) տարբեր մասնագիտությունների հետ ծանոթացմանը։

24. Տարրական կրթության ծրագիրը պետք է ներառի նախնական, տարրական գիտելիքներ, պատկերացումներ՝

1) աշխատանքի և աշխատատեղի ճիշտ կազմակերպման,

2) նյութը ձեռքով մշակելու, նմուշներ պատրաստելու,

3) ուսումնառության ընթացքում և տանը, կենցաղում օգտագործվող գործիքների ու հարմարանքների շահագործման եղանակների,

4) բնական և արհեստական որոշ նյութերի տեսակների և դրանց հատկությունների,

5) բնական և արհեստական որոշ նյութերի ձեռքի գործիքներով մշակելու պարզագույն տեխնիկայի և տեխնոլոգիական գործընթացների,

6) աշխատանքային գործիքների տեսակների, դրանց կառուցվածքի ու նշանակության, հայերեն անվանումների,

7) աշխատանքային գործիքների ու հարմարանքներիօգտագործման և պահպանման ձևերի ու եղանակների,

8) սենյակային բույսեր խնամելու,

9) աշխատանքի անվտանգության կանոնների և սանիտարահիգիենիկ պահանջների մասին:

9. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

25. Տարրական կրթության ծրագրի «Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն» ուսումնական բնագավառը նպատակաուղղված է՝

1) սովորողի կողմից սեփական մարմնի խնամքին և առողջությանը հետևելու կարևորության արժևորմանը.

2) առողջ և ռացիոնալ սննդի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը.

3) պարբերաբար առավոտյան հիգիենիկ մարմնամարզության և տարբեր շարժախաղերի դերի ու նշանակության կարևորմանը.

4) վնասակար սովորույթների նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորմանը.

5) առողջ, իր կարողություններին համապատասխան ֆիզիկապես զարգացած, անձնական հիգիենայի, առողջապահական և անվտանգության կանոններին տիրապետող, արտակարգ իրավիճակներում կողմնորոշվող, կարգապահ, տրամաբանական խաղի շնորհիվ մտավոր կարողությունները զարգացնող և հայրենասեր անձի ձևավորման հիմքերի ապահովմանը։

26. Տարրական կրթության ծրագիրը պետք է ներառի նախնական, տարրական գիտելիքներ, պատկերացումներ՝

1) ֆիզկուլտուրայի, ֆիզիկական վարժությունների, օրվա ռեժիմի և անձնական հիգիենայի պահպանման, առողջապահական և անվտանգության կանոնների,

2) տանը, դպրոցում, փողոցում և այլուր հնարավոր արտակարգ, վտանգավոր իրավիճակների և դրանց հետևանքների,

3) ամենատարածված, մասսայական շարժախաղերի, շախմատի և դրանց հիմնական կանոնների,

4) առողջության պահպանման գործում ֆիզկուլտուրայի դերի ու նշանակության մասին։

1. ՏԱՐՐԱԿԱՆԴՊՐՈՑԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

66 Տարրական դպրոցի շրջանավարտը պետք է՝

1) կարողանա հաղորդակցվել հայերենով՝
ա. ընկալել ուրիշների խոսքը և արտահայտել սեփական մտքերը,
բ. կարդալ և հասկանալ գրավոր պարզ տեքստեր,
գ. գրավոր շարադրել պարզ տեքստեր,
դ. կատարել գրավոր պարզ հանձնարարություններ.
2) կարողանա հաղորդակցվել օտար լեզվով՝
ա. լինել գրաճանաչ,
բ. առօրյա իրավիճակներում պատասխանել պարզ հացերի,
գ. հաղորդակցվել ծանոթ հարցերի շուրջ.
3) ունենա մաթեմատիկական գրագիտություն և տարրական կարողություններ բնագիտության ոլորտում՝
ա. տիրապետի տարրական մաթեմատիկայի նշանային համակարգին, կիրառի թվաբանական գործողությունները (գումարում, հանում, բազմապատկում, բաժանում) առօրյա պարզ խնդիրներում,
բ. եզրակացություններ անի պատճառահետևանքային կապերի վերաբերյալ,
գ. ճանաչի երկրաչափական պատկերները,
դ. տարրական պատկերացում ունենա բնության և շրջակա միջավայրի մասին,
ե. գիտակցի մարդու կողմից շրջակա միջավայրը բարելավելու հնարավորությունները և պատասխանատվությունը,
զ. ճանաչի և սիրի իր բնակավայրը, հայրենիքը, հայրենի բնությունը, խնամքով վերաբերվի շրջակայքին,
է. ունենա թվայնացված տեխնոլոգիաների օգտագործման տարրական կարողություններ,
ը. կարողանա օգտվել ժամանակակից կենցաղային և թվայնացված տեխնիկական միջոցներից (հեռուստացույց, հետախոս և այլն),
թ. ունենա համակարգչային տարրական գրագիտություն.
4) ունենա ինքնուրույն սովորելու կարողություններ՝
ա. ինքնակազմակերպվել և ինքնուրույն գործունեություն ծավալել,
բ. ճիշտ գնահատել իր հնարավորությունները,
գ. տիրապետել սովորելու հիմնական հմտություններին, ունենալ սովորելու կամք և վստահություն սեփական ուժերի հանդեպ,
դ. դրսևորել աշխարհաճանաչողության գործուն և առողջ հետաքրքրասիրություն.
5) ունենա հասարակական և քաղաքացիական կարողություններ՝
ա. գիտակցի և արժևորի իր ազգային ինքնությունը,
բ. հարգի և ընդունի ընտանեկան ու հասարակական կյանքի արժեքները,

գ. ունենա օբյեկտիվ ինքնագնահատական,
դ. ցուցաբերի հարգալից վերաբերմունք շրջապատի նկատմամբ, հանդուրժողականություն և զսպված վարք,
ե. ճանաչի և արժևորի իր հայրենիքը, Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները,
զ. իմանա իր իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատու լինի իր արարքների համար,
է. գիտակցի իր պատկանելությունը համայնքին.

6) ունենա տարրական կենցաղային, աշխատանքային հմտություններ, լինի նախաձեռնող և գործունյա՝

ա. կարողանա աշխատել համագործակցված, լինել թիմի անդամ,
բ. կարողանա պլանավորել անձնական գործերը և իրականացնել դրանք,
գ. լինի նախաձեռնող,
դ. կատարի գնումներ.

7) ունենա գեղագիտական ընկալում և ստեղծագործական տարրական կարողություններ՝

ա. զբաղվի անհատական կամ խմբային գեղարվեստական գործունեությամբ՝ նկարել, ծեփակերտել, երգել, նվագել, հանդես գալ բեմադրություններում,
բ. նկարչական միջոցներով, երևակայական պատկերներով արտահայտի գաղափարներ,
գ. ունենա և արտահայտի սեփական կարծիքն արվեստի ստեղծագործությունների վերաբերյալ,
դ. հաճույք ստանա ստեղծագործական աշխատանքից և հաճույքով դրանք ցուցադրի.

8) կարևորի մարմնակրթության և սպորտի դերն ու նշանակությունը՝

ա. կարողանա պահպանել անձնական հիգիենայի կանոնները՝ դրսևորելով սեփական մարմինը խնամելու կամք,
բ. զբաղվի որևէ անհատական կամ խաղային մարզաձևով,
գ. մրցակիցների նկատմամբ լինի ազնիվ, հարգալից և հանդուրժող,
դ. արժևորի առողջ ապրելակերպը, իմանա անվտանգ կենսագործունեության կանոնները և դրանք կիրառի կյանքում:

3.1.2. Առարկայական չափորոշիչներ, դրանց ձևավորման սկզբունքներն ու կառուցվածքը:

Հանրակրթական առարկաների չափորոշիչները մշակվում են հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան և հաստատվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից:

Առարկայական չափորոշիչը մշակվում է հանրակրթության պետական կրթակարգում սահմանված հիմնական սկզբունքների համաձայն: Առարկայական չափորոշչի հիման վրա մշակվում են ուսումնական առարկաների պետական ծրագրերը, որոնք հիմք են ծառայում դասագրքերի, ձեռնարկների և ուսումնական այլ նյութերի ստեղծման համար: Առարկայական չափորոշչի հիման վրա կարող են ստեղծվել այլընտրանքային առարկայական ծրագրեր և դասագրքեր, որոնք նույնպես հաստատվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից:

✓ Առարկայական չափորոշիչների ձևավորման սկզբունքները

- Ուսումնական բնագավառի ընդհանրական բովանդակության որոշակիացումը և տեղակայումը՝ ըստ դպրոցի աստիճանների և բովանդակային բաղադրիչների:
- Ուսումնական նյութի յուրացման կարողությունների և հմտությունների գնահատելիության ապահովումը:
- Առարկայի բովանդակության, ուսումնական նյութի և կիրառական հմտությունների զարգացման շարունակության ապահովումը՝ըստ դասարանների շարունակության:
- Առաջադրված պահանջների հստակությունը և նորամուծությունների հիմնավորվածությունն ու պաճառաբանվածությունը:
- Առարկայի յուրացման ընթացքում սովորողի ինքնուրույն աշխատանքիընդունելի ծավալի պահպանումը, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հնարավորությունների օգտագործումը:
- Մյուս առարկաների յուրացմանը նպաստող գործոնները հաշվի առնելը:
- Ներառարկայական և միջառարկայական միասնացման ապահովումը:
- Ուսումնական նյութի թեմատիկ շարադրանքում բովանդակային համապատասխան բաղադրիչների տեղակայումը, դրանց համակողմանի ներկայացման ապահովումը:
- Սովորողների ուսումնական գործունեության պլանավորումը:

✓ Առարկայական չափորոշիչների կառուցվածքը

Առարկայական չափորոշիչը ներառում է՝

ա) Բացատրագիր,

բ) Տվյալ առարկայի դասավանդման հայեցակարգը, որում ներկայացված են այն հարցադրումներն ու հիմնադրույթները, որոնք կողմնորոշիչ դեր ունեն կրթության բովանդակության մեջ տվյալ առարկայի գործառույթները որոշելու համար,

գ) Տվյալ առարկայի ուսումնական ընդհանուր նպատակներն ըստ կրթական աստիճանների,

դ) Առարկաների բովանդակային պարտադիր միջուկը (հենքային բովանդակությունը),

ե) Սովորողին ներկայացվող պարտադիր պահանջները՝ նրանց գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ծավալը և արժեքային համակարգը, որի նպատակն է՝ ձևավորել անձ և քաղաքացի, որն դրսևորվի սովորողի համապատասխան գործողությունների, վերաբերմունքի և վարքի մեջ,

զ) ուսումնական գործունեության տեսակները՝ մեթոդական ամենաընդհանուր հանձնարարականներով, որոնք ուսուցման գործընթացում ըստ նպատակահարմարության կարող են ընտրվել և կիրառվել ուսուցչի կողմից,

է) Ուսուցման արդյունքների ստուգման ու գնահատման կարգը և սկզբունքները, որում հստակեցվում և որոշակիացվում են գնահատման <<10>> միավորային սանդղակը, աշակերտների գրավոր աշխատանքները և բանավոր հարցումները ստուգելու, ընթացիկ և կիսամյակայինգնահատումներ կատարելու սկզբունքները,

ը) Առաջարկվող գրականության ցանկը:

Տարրական դասարաններում դասավանդվող առարկաների չափորոշիչները գրված են ոչ թե ըստ դասարանների, այլ ամրագրված է, թե տարրական դպրոցն ավարտողը այդ առարկաների ուսումնասիրման շնորհիվ ինչ պետք է իմանա, ինչ կարողանա, ինչի մեջ հմտանա, և որպես քաղաքացի իր ցուցաբերած վերաբերմունքի, դիրքորոշման, վարքի և գործելակերպի միջոցով ինչ պետք է գիտակցի, զգա, գնահատի, կարևորի:

Դասավանդվող առարկաների չափորոշիչներում առանձին բաժիններով են ներկայացված կրթության բովանդակության հետևյալ բաղադրիչները.

1. Գիտելիքների համակարգ,
2. Կարողություններ և հմտություններ (ճանաչողական-տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական),
3. Արժեքային համակարգ:

Չափորոշչում գիտելիքը, կարողությունները և հմտությունները ներկայացված են առանձին բաժիններով և եռաստիճան համակարգով, որն էլ ենթադրում է երեխաների պատրաստվածության տարբեր մակարդակները՝ առաջին, երկրորդ և երրորդ: Այս աստիճանները տարորոշված են ըստ կրթվածության, մտավոր զարգացման, ինքնուրույնության, ստեղծագործական կարողությունների, մտքի ճկունության, հիշողության, ճանաչողական ակտիվության ձևավորման մակարդակների: Ինչպես նշվեց, աշակերտների պատրաստվածության մակարդակը գնահատվում է կրտսեր դպրոցի ավարտին, բայց ուսուցման չորս տարիների ընթացքում անհրաժեշտ կլինի լավ ճանաչել երեխայի ներքին հնարավորությունները և անհատական մոտեցման ճանապարհով նպաստել նրա զարգացմանը՝ բացահայտելով նրա ողջ ներուժը և իր ուժերին համապատասխան ապահովելով մտավոր ակտիվությունը:

Հայտնի է, որ կրտսեր դպրոցականի ուսումնառության չափորոշչային հիմքն այսպիսին է.

1-ին մակարդակ՝ գիտելիքների, կարողությունների, հմտությունների պարտադիր, նվազագույն պահանջն է,

2-րդ մակարդակ՝ գիտելիքների, կարողությունների, հմտությունների կիրառումն է ծանոթ իրավիճակում,

3-րդ մակարդակ՝ գիտելիքների, կարողությունների, հմտությունների կիրառումն է ստեղծագործաբար, ոչ ստանդարտ իրավիճակում:

3.1.2. Չափորոշչահեն կրթություն

1. Ուսուցիչների աշխատանքը չափորոշիչների հետ

- նրանց կստիպի լինել ավելի ստեղծագործ,
- հնարավոր կդարձնի հետագայում մասնակցել չափորոշիչների կատարելագործման գործընթացին,
- թույլ կտա իրենց աշխատանքային պլանները դարձնել ավելի կատարյալ, արդյունավետ,
- ապահովել աշակերտների կողմից նյութի յուրացման բարձր աստիճան (գիտելիքի, կարողության, արժեհամակարգի ձեռքբերում, ճանաչողության, քննադատական մտածողության բարձր մակարդակ):

2. Չափորոշիչների օգտագործումը պլանավորման ընթացքում

✓ պլանավորման համար հիմնական ուղեցույց պետք է դառնա չափորոշիչը (և ոչ թե առարկայական ծրագիրը կամ որոշակի դասագրքի որոշակի թեման): Ճիշտ պլանավորումը լայն հնարավորություններ է ստեղծում ուսուցումը ճիշտ և արդյունավետ կազմակերպելու համար:

3. Ուսուցիչները պետք է սահմանեն հետևյալ հարցերի պատասխանները.

- Ինչն է աշակերտների համար կարևոր իմանալ:
- Ինչն է կարևոր կարողանալ անել:
- Ինչպիսի անձնավորություն ենք ուզում ունենալ:

4. Գիտենալ, կարողանալ, լինել համակարգը կարելի է ներկայացնել եռանկյան ձևով:

ԼԻՆԵԼ. Բնավորություն . Արժեքներ. Դիրքորոշում/գործելակերպ

ԿԱՐՈՂԱՆԱԼ, ԱՆԵԼ: Առարկայական հմտություններ :

Վերառարկայական հմտություններ

ԳԻՏԵՆԱԼ: Տնական գիտելիքներ, ըմբռնում, միջառարկայական հասկացություններ, թեմաներ, փաստեր

. ***Գիտենալ*** բաղադրիչը ներառում է փաստեր, թեմաներ, հասկացություններ, տնական ընկալումներ: Գիտելիքի ծավալը համեմատաբար հեշտ է չափել

փաստերի իմացության գնահատման միջոցով՝ օրինակ ստանդարտ թեստերով:

- ***Կարողանալ*** բաղադրիչը պարունակում է առարկային առնչվող կարողություններ (վարժ կարդալ, հմտանալ խնդիրների լուծման մեջ և այլն): Այն պարունակում է նաև վերառարկայական՝ բոլոր առարկաների համատեքստում ձևավորվող գործնական հմտություններ, ինչպիսիք են՝ արդյունավետ հաղորդակցում, համագործակցում, ինքնուրույն գործունեություն, տեղեկատվության հավաքում և այլն: Այս բաղադրիչը ներառում է նաև հմտություններ, որոնք Բլումի տաքսոնոմիայով բնորոշվում են որպես բարձրակարգ (վերլուծական, համադրական, գնահատման): Վերջին կարողությունների առկայությամբ է պայմանավորված քննադատական մտածողությունը:

- ***Լինել*** բաղադրիչը ներառում է մտածելակերպ-դիրքորոշում, հավատամք և վարքագիծ-գործելակերպ, ընդհանուր առմամբ արժեքների համակարգ, որն ակնկալում ենք, որ մեր աշակերտները կունենան ուսուցման արդյունքում: ***Լինել*** բաղադրիչը չափորոշիչներում ըստ ծավալի ամենափոքր բաղադրիչն է, այն դժվար է չափել: Դյուրին չէ նաև արժեքների համակարգի կառուցումը հանրակրթության առարկայական չափորոշիչներում:

5. Չափորոշիչների վրա հիմնված կրթության առանձնահատկությունները կարող ենք հակիճ ներկայացնել հետևյալ կերպ.

- Ուսուցման գործընթացի մասնակից բոլոր մասնագետների կողմից չափորոշիչների և դրանց գործառույթների հստակ իմացություն:

- Ուսուցման և յուրացման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է կատարել ուսումնական թեմաների լիարժեք պանավորում, որը պետք է հիմնված լինի վերոհիշյալ տրամաբանությամբ ստեղծված չափորոշչի վրա:

- Դասի պլանում դասի նպատակների ճիշտ շարադրման համար շատ կարևոր է տեսնել թե թեմայի ամբողջական ընկալման, յուրացման համար ուսուցման հիմքում ինչ հասկացություններ պետք է տեսնել և տվյալ դասարանում դրանց յուրացումը մինչև ուր հասցնել:

- Թեմատիկ միավորների և դասերի պլանավորման ժամանակ առանձնահատուկ ուշադրություն է պահանջում գնահատման առաջադրանքի ճիշտ ընտրությունը: Պետք է հստակեցնել՝ իրենց գիտելիքները և հմտությունները դրսևորելու համար աշակերտներն ինչ պիտի անեն:

Բաժին 3. ԹԵՄԱ 1. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

3.1.1. Կրթության բովանդակային բաղադրիչներն ըստ հանրակրթության պետական չափորոշչի

Կրթության բովանդակությունը

Կյանքի արագընթաց փոփոխությունների, տեղեկատվության ծավալի բազմապատկման, կրթության նկատմամբ հասարակության պահանջկոտության մեծացման, հակակրթական գործոնների և միջավայրի ուժեղացման պայմաններում, <<ի՞նչ սովորեցնել>> հարցը խիստ հրատապ է դարձել: Ավանդաբար, հենց այս հարցին է փորձում պատասխանել կրթության բովանդակությունը:

Կրթության բովանդակության մի քանի մակարդակ կա. **մշակված բովանդակություն** (չափորոշիչներ, ծրագրեր, դասագրքեր), **հաղորդվող բովանդակություն** (ուսումնական գործընթաց), **յուրացվող բովանդակություն** (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, արժեքներ ...): Սովորաբար, ուսուցչին է վերապահվում երկրորդ մակարդակի իրականացումը և երրորդ մակարդակի պատասխանատվությունը: Ուսուցիչը նվազ մասնակցություն ունի կրթության բովանդակության մշակմանը: Համարվում է, որ այս խնդիրն առավելապես կրթության բովանդակային քաղաքականությունը մշակողների, ծրագրերի, դասագրքերի հեղինակների գործառույթն է:

Ներկայումս իրավիճակը փոխվում է: Պետությունը իր հիմնական գործառույթն է համարում բովանդակության ընդհանուր պահանջների և սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների՝ չափորոշիչների սահմանումը: Այդ մոտեցման վրա է հիմնված Հայաստանի հանրակրթության պետական կրթակարգը: Բովանդակային նոր քաղաքականությամբ նախանշվում է, որ լինելու են այլընտրանքային ծրագրեր, դասագրքեր: Ենթադրվում է, որ նման խայտաբղետության պայմաններում ուսուցչից մեծ ջանքեր են պահանջվում բովանդակայինությունը դասարանին հարմարեցնելու և արդյունավետ կիրառելու համար: Այսպիսով, բովանդակության բոլոր մակարդակներում ժամանակակից ուսուցչից գործուն մասնակցություն է պահանջվում: Վճռորոշ դեր ունենալով հաղորդվող բովանդակության գործում՝ ուսուցիչը պետք է փորձի բովանդակության մյուս երկու մակարդակները միմյանց համապատասխանեցնելու խնդիրը լուծել. Իսկ այդ խնդիրը որոշ չափով դժվարանում է, քանի որ, եթե նախկինում մշակված բովանդակությունը առարկայական ծրագրերն ու դասագրքերն էին, ապա այսօր դրանց ավելանում են չափորոշիչները: Այսինքն, ուսուցչի առջև խնդիր է դրվում ոչ թե սոսկ դասագրքի նյութը հաղորդել, այլ այնպես սովորեցնել, որ արդյունքում աշակերտի պատրաստվածության մակարդակը համապատասխան լինի չափորոշիչներին:

Պետական կրթական չափորոշիչը կրթության բովանդակության կարգավորման և վերահսկողության միջոց է: Այն սահմանվում է՝ հաշվի առնելով կրթության բնագավառում հասարակական օբյեկտիվ պատվերը, այսինքն՝ այն, թե հասարակական զարգացումը ինչպիսի պահանջներ է ներկայացնում աճող սերնդի կրթությանը: Ինչ պետք է սովորի աճող սերունդը արդյունավետ կերպով հասարակական կյանքում ներգրավվելու համար:

Պետական չափորոշիչը նվազագույն կրթական մակարդակի և սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության առավելագույն մատչելիության սահմանները որոշող պահանջների ամբողջությունն է:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Կրթական բնագավառները ներկայացվում են հետևյալ բովանդակային բաղադրիչների միջոցով.

ա/ **գիտելիքների համակարգ,**

բ/ **կարողություններ և հմտություններ՝ ճանաչողական, տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական, ինքնուրույն գործունեության,**

գ/ **արժեքային համակարգ:**

Հանրակրթական բովանդակային բաղադրիչները միասնական են, փոխկապակցված և որոշակիացվում են հանրակրթական պետական ծրագրի բաղադրամասեր հանդիսացող տարրական հանրակրթական, հիմնական հանրակրթական և միջնակարգ հանրակրթական, ընդհանուր մասնագիտացված և հատուկ պետական ծրագրերում՝ ըստ կրթական բնագավառների և կրթական աստիճանների՝ հաշվի առնելով սովորողների զարգացման ֆիզիոլոգիական, հոգեբանական և ազգային առանձնահատկությունները:

Գիտելիքների համակարգ:

Ելնելով տարբեր կրթական աստիճանների նպատակներից, հանրակրթական ծրագրերը ներառում են գիտելիքներ՝

ա/ հայոց լեզվից, գրականությունից և այլ լեզուներից,

բ/ մաթեմատիկայից,

գ/ ինֆորմատիկայից և ՏՀՏ-ից,

դ/ բնության, բնօգտագործման և բնապահպանության մասին,

ե/ մարդու՝ որպես կենսաբանական ու սոցիալական էակի մասին,

զ/ հայոց և համաշխարհային պատմությունից,

է/ հասարակության, նրա կառուցվածքի, հաստատությունների, սոցիալական խմբերի, զարգացման օրինաչափությունների, փոխհարաբերությունների, առկա հիմնախնդիրների մասին,

ը/ ֆիզիկական կրթության, առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության մասին,

թ/ արվեստի տեխնոլոգիայի բնագավառների մասին,

ժ/ ազգային ու համամարդկային հոգևոր-մշակութային, սոցիալական, քաղաքական և տնտեսական արժեքների մասին:

Կարողություններ և հմտություններ:

Կրթության արդյունքում ձեռք բերած կարողությունների և հմտությունների ամբողջությունը սովորողին հնարավորություն է ընձեռում գործնականում կիրառել ստացած գիտելիքները, հարստացնել ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության, ստեղծագործական որակները:

Առանձնակի կարևորվում է **ճանաչողական, տրամաբանական** **կարողությունների և հմտությունների** ձևավորումն ու զարգացումը, որի նպատակն է՝ ոչ միայն սովորողներին ծանոթացնել ճանաչողական մեթոդներին, այլև ձևավորել դրանք գործնականում կիրառելու կարողություններ ու հմտություններ, այդ թվում՝

ա/ գիտելիքներ ձեռք բերելու, սովորելու կարողություն,

բ/ երևույթներն ու փաստերը վերլուծելու, քննադատական մտածողություն դրսևորելու կարողություն,

գ/ մտահանգումներ անելու, ընդհանրացնելու և համադրելու կարողություն,

դ/ հիմնախնդիրը տարբեր տեսանկյուններից դիտելու, ուսումնասիրելու, հնարավոր լուծումներ գտնելու կարողություն,

ե/ իրավիճակը վերլուծելու և եզրակացություններ կատարելու կարողություն,

զ/ նպատակներ դնելու, դրանց հասնելու ուղիներ մշակելու և սեփական անելիքը, գործը ծրագրելու կարողություն և այլն:

Հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության մեջ էական տեղ է տրվում **հաղորդակցական** կարողությունների և հմտությունների ձևավորմանը, որպեսզի այդ ծրագրերով կրթության կազմակերպման արդյունքում յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա/ լսել, ընկալել, համարժեք վերաբերմունք դրսևորել,

բ/ բանավիճել, բանավոր և գրավոր տրամաբանված խոսք կառուցել,

գ/ ըստ նշանակության և տեղին օգտագործել սովորած տերմինները /եզրերը/, հասկացությունները և արտահայտությունները,

դ/ հասկանալ և ճիշտ օգտագործել հաղորդակցման ոչ խոսքային միջոցները և այլն:

Կարևորվում են նաև **համագործակցային** կարողություններն ու հմտությունները, որոնց նպատակն է նպաստել ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորողի հետևյալ կարողությունների զարգացմանը՝

ա/ աշխատել խմբում, միասին որոշումներ կայացնել և դրանց համար պատասխանատվություն կրել,

բ/ սովորել և սովորեցնել,

գ/ դրական հարաբերություններ ստեղծել, դրսևորել առողջ մրցակցություն,

դ/ սեփական շահը գիտակցելով՝ ճանաչել և ընդունել ուրիշների շահերը,

ե/ բախումնային իրավիճակներում հավասարակշռված պահվածք դրսևորել,

զ/ լինել բարեկիրթ, հարգել ընկերոջ իրավունքները,

է/ իրավիճակները դիտարկել և մեկնաբանել այլոց տեսանկյունից և այլն:

Ստեղծագործական կարողությունների զարգացմանն ուղղված ենթաբաղադրիչի նպատակն է ծրագրում ներառել սովորողի ստեղծագործական

ընդանուկություններն ու երևակայությունը խթանող ուսումնական գործունեություն, որպեսզի յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա/ դրսևորել ստեղծագործական երևակայություն,

բ/ ստեղծագործաբար կիրառել ձեռք բերած գիտելիքները,

գ/ երևակայել, խորհել և ենթադրություններ անել ապագայի մասին,

դ/ ընկալել և ընդունել նյութական և հոգևոր նոր արժեքները:

Ինքնուրույն գործունեության կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակն է ապահովել, որ յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա/ անաչառ գնահատել սեփական ուժերն ու կարողությունները և ըստ այդմ ծավալել ուսումնական, աշխատանքային գործունեություն,

բ/ գիտակցել սեփական գործի կարևորությունը,

գ/ ճիշտ տնօրինել ժամանակը, մշակել և պահպանել աշխատանքի և հանգստի ժամակարգ /ռեժիմ/, վերահսկել սեփական վարքը,

դ/ խնամել սեփական մարմինը,

ե/ զբաղվել ինքնակրթությամբ,

զ/ կողմնորոշվել տարբեր իրավիճակներում:

Արժեքային համակարգն արտահայտվում է սովորողի համապատասխան գործողությունների, նրա դրսևորման վերաբերմունքի և վարքի միջոցով: Ուսուցման և դաստիարակության միասնականության ապահովման միջոցով ձևավորել անձ -քաղաքացի, որը պետք է՝

ա/ գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը,

բ/ հարգի ՀՀ պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր

գ/ գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնալոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են

դ/ կարևորի գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը,

ե/ կարևորի բարոյական չափանիշները, քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ...,

զ/ կարևորի գեղագիտական արժեքները...

է/ գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը,

ը/ հարգի մարդու իրավունքները, լինի մարդասեր...,

թ/ անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը,

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հանրակրթության պետական չափորոշիչը սահմանում է հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, առավելագույն ծավալը, տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ծրագրերի շրջանավարտներին ներկայացվող ընդհանրական պահանջները և սովորողների գնահատման համակարգը:

2. Չափորոշչի նորմերն ու դրույթները պարտադիր են Հայաստանի Հանրապետության կրթության կառավարման մարմինների, տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր, հատուկ և մասնագիտացված հանրակրթական ծրագրեր մշակողների և իրականացնող ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական ու սեփականության ձևերից և ենթակայությունից□3. Հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան՝ 1)մշակվում են պետական և այլընտրանքային հանրակրթական ծրագրերը. 2) փորձաքննության են ենթարկվում հաստատման ներկայացված այլընտրանքային հանրակրթական ծրագրերը. 3) կազմակերպվում են հանրակրթական ծրագրերի իրականացումը և դրա պետական վերահսկողությունը. 4) գնահատվում են հանրակրթության արդյունքները: